



«ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԻ» (Գրախոսական)

Անցյալում Հայ Եկեղեցու սպասավորներից բազմաթիվ դեմքեր հրատարակել են հոգեվոր և կրոնական բնույթի գրքեր: Ներկայումս գործող հայ հոգևորականության մեջ քչերն են, որ պատվում են կրոնագիտական աշխատասիրություններ կատարելու: Նրանց մեջ աչքի է ընկնում այժմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ՝ Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, որ վերջին քառասնամյակում հրատարակել է տասնհինգ գրքեր, որոնք լույս են տեսել ԱՄՆ-ում, Արգենտինայում և Լիբանանում: Դրանք ունեն կրոնական, եկեղեցական և հայրենասիրական բնույթ. նվիրված են Քրիստոնեական վարդապետության, Հայ Եկեղեցուն ու նրա վարդապետության, Վարդանանց խորհրդին, Հայ Երուսաղեմին, Խրիսիան Հայրիկին և այլն:

Սրբազան Հայրը վերջերս՝ իր ծննդյան 80-ամյակի նախօրեին լույս ընծայեց իր 16-րդ գիրքը¹, որ կրոնական մի դասագիրք է, նվիրված Աստվածաշնչի ուսումնասիրման: Այս հատորն օգտաշատ մի ձեռնարկ կարող է լինել ամեն մի ձեռնարանցու և ժառանգավորի համար, մինևույն ժամանակ սեղանի ուղեցույցը՝ Ս. Գիրքն ուսումնասիրող յուրաքանչյուր անհատի: Այս բնույթի մի գրքի պահանջը խիստ էր պզգայում:

Սույն հատորի մտահղացումը կատարված է ավելի քան կես դար առաջ: Այն գրված է Երուսաղեմում 1931 թ. և գործածված իբրև

դասագիրք Ս. Հակոբա վանքի ժառանգավորաց վարժարանում: Ապա տարիներ հետո աշխատությունը վերամշակված ու սրբազորված է Ամերիկայում: 1955-ին գործի «մի մասը» հրատարակված է Բուենոս Այրեսի Հայոց Եկեղեցու պաշտոնաթերթ ՎՅՅ ԿԵԴՌՆ ամսագրում: Իսկ 1956-ից սկսած ձեռագիրն իբրև դասագիրք գործածվել է նաև Ս. Էջմիածնի Հոգևոր ձեռնարանում:

«Այժմ զայն կիրատարակենք հավելումներով,—գրում է Սիոն Սրբազանը նոր հրատարակված գրքի առաջաբանում,—և կխորհինք, որ անիկա ոչ միայն մեր Հոգևոր Դպրոցներուն մեջ կրնա գործածվիլ իբրև դասագիրք, այլ նաև մեր ժողովուրդին ծանոթացնել Աստվածաշունչ Մատյանը, անոր կրոնական դաստիարակության ուղեցույց ըլլալ, անկե ներշնչվելու և հոգևոր մխիթարություն գտնելու Կենաց Մատյանին մեջ»:

«Ներածություն Աստվածաշունչի» հատորը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը նվիրված է Հին Կտակարանին, իսկ երկրորդը՝ Նոր Կտակարանին:

Առաջին «մասում (էջ 5—114) հեղինակը կարևոր տեղեկություններ և վկայություններ է տալիս Աստվածաշնչի մասին: Գրում է Հին Կտակարանի բնագրի, բովանդակության, թարգմանությունների, բաժանումների, կանոնի, լեզվի և այլ հարցերի մասին: Այստեղ գտնում ենք անհրաժեշտ նյութեր Հնգամատյանի, ինչպես նաև պատմական, բանաստեղծական ու մարգարեական գրքերի մեծ ու փոքր մարգարեների մասին: Օգտագործելով Հին Կտակարանի մասին հրատարակված նորագույն ուսումնասիրությունները, Սրբազանը նյութի մատուցումը դարձրել

¹ Սիոն արքեպ. Մանուկյան, Ներածություն Աստվածաշունչի, Բեյրութ, 1984 թ., 179 էջ (Տոնիկյան տպարան):

է այժմեական և հայ բանասիրությունը հարստացրել նորագույն տեղեկություններով:

Երկրորդ մասում (էջ 115—175) Սրբապանն ամփոփ կերպով կանգ է առնում չորս Ավետարանների, Գործք Առաքելոցի, Պողոս առաքյալի և Հովհաննու հայտնության վրա:

Գրքի գրեթե յուրաքանչյուր գլխի ու ենթաբաժնի վերջում հեղինակը «**Ոսկեղեն համար**» վերնագրի տակ տալիս է գեղեցիկ և կարճ մեջբերումներ Ս. Գրքից, որոնք բարոյա-դաստիարակչական մեծ արժեք ունեն հոգևոր ասպարեզի պատրաստվող ուսանողության համար:

Գերաշնորհ Ս. Միոն արքեպիսկոպոս Մանուկյանի սույն աշխատությունն արժանի է ամենայն գնահատանքի ու քաջալերության:

Խիստ ուսանելի է Սրբապան Հոր եռանդն ու ջանասիրությունը՝ որպես օրինակ երիտասարդ հոգևորականներին: Ջերմ հավատքը, որով գրված է ամեն տող, և ճշմարտությունը որոնելու ճիգը վկայում են այն մասին, որ Սրբապան Հայրը կարող է նորանոր ուսումնասիրություններով հարստացնել մեր կրոնական բանասիրությունը: Հոգևոր ասպարեզի պատրաստվող ուսանողությունը պետք է կարողանա լիրավ կերպով օգտվել սույն ձեռնարկի բովանդակությունից և կրոնական ոգուց: Ահա այս դեպքում հեղինակը հասած կլինի իր բարի ու օգտակար նըպատակին:

Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

